ՀՏԴ 929:800 Հայրապետյան

Doi:10.54503/0135-0536-2024.2-294

ՎԱՐԴԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

Ապրիլի 19-ին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում (ՀԱԻ) կայացավ բանասեր-ռուսագետ և հերմենևտ, «Պատմաբանասիրական հանդես»-ի նախկին աշխատակից, խմբագիր Վարդան Հայրապետյանի (1948–2019) 75-ամյակին նվիրված՝ ՀԱԻ «Հայկական հումանիտար պարբերագրի» («Армянский гуманитарный вестник») *11-րդ համարի՝ «Վարդան Հայրապետյան Anno 75» երկհատորյակի լույս ընծայման շնորհանդեսը: Հրատարակությունը ներկայացնում է Վ. Հայրապետյանի գիտական ծավալուն ժառանգությունը, որն իրականացվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀԱԻ-ի մշակութային մարդաբանության բաժնի վարիչ Լևոն Աբրահամյանի, բանասեր Արմեն Գրիգորյանի (Մոսկվա) և պարբերագրքի գլխավոր խմբագիր, ՀԱԻ-ի բանահյուսության տեսության և պատմության բաժնի գիտաշխատող Արեգ Բայանդուրի ջանքերով:*

Վ. Հայրապետյանը ծնվել է Երևանում, որտեղ ապրել է երկար տարիներ, սակայն իր գործունեության բերումով առավել հայտնի է Հայաստանից դուրս: 1972 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ռուսական բաժինը, որտեղ 1972–1974 թթ. աշխատել է Գրական հայագիտական լաբորատորիայում, իսկ 1974–1986 թթ.՝ «Պատմաբանասիրական հանդեսում»՝ որպես ռուսերենի խմբագիր: 1994–2000 թթ. ապրել է Դանիայում: 2000 թ. վերջից 2001 թ. կեսն աշխատել է Ռուսական պետական հումանիտար համալսարանին կից Բարձրագույն հումանիտար ուսումնասիրությունների ինստիտուտում (Մոսկվա): Վերադառնալով հայրենիք՝ 2006–2008 թթ. դասավանդել է ԵՊՀ-ում ռուս հերմենևտիկա առարկան:

Շնորհանդեսին ներկա էին պարբերագրքի խմբագրական խորհրդի անդամները՝ Զարուհի Հակոբյանը, Մանեա Էռնա Շիրինյանը, Գայանե Շագոյանը, Վ. Հայրապետյանի մտերիմները, աշխատանքային ընկերները և այլ հյուրեր: Առցանց մասնակցում էին Սոֆյա Վինոգրադովան (Մոսկվա), Անահիտ Տոնապետյան-Դեմոպուլոսը (Փարիզ), Պյոտր Քոչարովը (Վյուրցբուրգ), Լենա Սիլարդը (Իտալիա, Սարդինիա, Սասսարի համալսարան): Վերջինիս հետ Վ. Հայրապետյանը 2002 թ. արժանացել է Անդրեյ Բելիի մրցանակին:

---

* *Ներկայացվել է 13. VI. 2024 թ., ընդունվել է տպագրության 10. VII. 2024 թ.:*

ՀԱԻ-ի փոխտնօրեն, բ. գ. թ. Տորք Դալալյանն իր խոսքում ընդգծեց Վ. Հայրապետյանի ավանդը «Հայկական հումանիտար պարբերագրի» հիմնադրման ու կայացման գործում (2006 թ.): Այն հիմնադրվել է Լ. Աբրահամյանի, Վ. Հայրապետյանի (ռուսերեն բաժնի խմբագիր), ՌԴ ԳԱ թղթակից անդամ Վլադիմիր Պլունգյանի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարությունյանի, պ. գ. դ. Պարույր Մուրադյանի, պ. գ. դ. Կարեն Յուզբաշյանի, պ. գ. դ. Մ. Է. Շիրինյանի և այլոց նախաձեռնությամբ:



Վ. Հայրապետյանի գործունեության մասին նաև խոսեցին Ա. Գրիգորյանը, բյուզանդագետ Մ. Է. Շիրինյանը, պ. գ. դ., բ. գ. դ. Արծրունի Սահակյանը, բ. գ. թ. Լիլիթ Մելիքսեթյանը, ազգագրագետ Արա Գուլյանը: Ա. Գրիգորյանը, ներկայացնելով պարբերագրի հրատարակությունը, հակիրճ խոսեց իրականացված նախագծի պատմության շուրջ, դրա գաղափարի և նախաձեռնողների մասին՝ կարևորելով Ա. Բայանդուրի և Լ. Աբրահամյանի դերը, հայտնելով իր երախտագիտությունը ռուս գիտնականներ՝ ՌԴ ԳԱ ակադեմիկոս Վլադիմիր Նիկոլաևիչ Տոպորովին, փիլ. գ. դ. Վյաչեսլավ Ալեքսանդրովիչ Բոչարովին, բ. գ. թ., փիլիսոփա Վլադիմիր Վենիամինովիչ Բիբիխինին ու նրանց մերձավորներին տրամադրած նյութերի և օժանդակության համար: Առաջին հատորում ընդգրկվել է նաև երկու հրապարակում՝ իբրև հավելում Վ. Հայրապետյանի գրքին. մեկը արտատպված է «Բանբեր Երևանի համալսարանի» պարբերականից, մյուսը՝ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրից: Այդ նյութերի առաջին հրապարակումն իրականացվել է Վ. Հայրապետյանի համակուրսեցիներ Պավել Բալայանի և Գայանե Հարությունյանի նախաձեռնությամբ:

Այնուհետև ելույթ ունեցան պ. գ. դ., ազգագրագետ Էլզա-Բայիր Գուչինովան, *արվ. դ., երաժշտագետ* Լևոն Հակոբյանը: *Լ. Աբրահամյանն իր խոսքում նշեց, որ Վ. Հայրապետյանն Անդրեյ Բելիի մրցանակը ստացել է ռուս հերմենևտիկայի մեջ ներդրած մեծ ավանդի համար: Ըստ հանձնաժողովի՝ մրցանակը շնորհվել է «ռուսաց լեզվում անգիտակցականի պարզաբանման գործում ակնառու առաջնթացի համար, ինչպես նաև «մյուսին» և նրա «ասածը» հասկանալու համար, նույնիսկ եթե նրա ասածն արտահայտություն չի ստացել»: Հավելեց, որ Վ. Տոպորովը Վ. Հայրապետյանի աշխատանքն որակավորել է որպես «տեկտոնական տեղաշարժ» և բեկում ռուս բանասիրության մեջ:*

Ելույթ ունեցողներն ընդգծեցին, որ Վ. Հայրապետյանը մտավորական էր ու խստապահանջ գիտնական: «Հայկական հումանիտար պարբերագրի» ներկայացվող հատորի առաջին մասն ընդգրկում է Վ. Հայրապետյանի տեքստերի ընտրանին՝ հատվածներ նրա «Толкуя слово» *գրքից և ավելի ուշ գրած հավելումները: Առանձին բաժնում ներառված են Վ. Տոպորովի, Ս. Բոչարովի և Վ. Բիբիխինի ակնարկներն իրենց գործընկերոջ և նրա գիտական աշխատանքների մասին: Հատորի մեջ նաև զետեղվել են Հայրապետյանի երեք համահեղինակների՝ Լ. Աբրահամյանի, փիլ. գ. դոկտոր, մաթեմատիկոս Հ. Առաքելյանի և*

ազգագրագետ Ա. Գուլյանի՝ «Разговор о круглых и абсолютных числах» *աշխատության հատվածները:*

Հատորի առաջին մասը եզրափակում են Վ. Հայրապետյանի մասին՝ Լ. Մելիքսեթյանի ու Վ. Հայրապետյանի ուսանողների՝ Կ. Վանեսկեղյանի, Ա. Հովհաննիսյանի, Ս. Այվազյանի հուշերը:

Հատորի երկրորդ մասը ներառում է Վ. Հայրապետյանի և Վ. Տոպորովի, Ս. Բոչարովի, Վ. Բիբիխինի նամակագրությունները, ինչպես նաև՝ կենսամատենագիտական նյութեր և գիտնականի հետ վերջին զրույցներից մեկի՝ «Событие говорения» *ձայնագրության տեքստային սղագրությունը: Իսկ պարբերագրում առկա նյութերի մեծ մասը հրապարակվում է առաջին անգամ:*

Երախտագիտությամբ նշենք Աննա Վլադիմիրովնայի՝ Վ. Տոպորովի դստեր հրատարակության նախապատրաստման ընթացքում, Ս. Բոչարովի մտերիմների՝ Իրինա Զախարովնա Սուրատի, նրա դստեր՝ Մարիա Սերգեևվնա Կասյանի, Վ. Բիբիխինի կնոջ՝ Օլգա Եվգենևվնա Լեբեդևայի, Ռուսական պետական գրականության և արվեստի արխիվի աշխատակիցների օգնությունը, որոնք սիրով աջակցեցին և ընդառաջեցին բոլոր հարցերում:

Օ. Լեբեդևան ոչ միայն ներկայացրեց Վ. Բիբիխինի հետ Վարդան Հայրապետյանի նամակագրությունը, այլև «Письмо на тему зеркала» *իր թվայնացրած եռակողմ նամակագրության ամբողջական տեքստը: Բացի այդ, նա մասնակցել է այդ նյութերի մեկնաբանություններին և խմբագրմանը:*

Պարբերագրի առաջին հատորում հրատարակվել են Ա. Գրիգորյանի «Երրորդ մարդը» և «… Գրում եմ և մտածում եմ Ձեզ հետ մշտական խոսակցության մասին» երկու հրապարակումները:

Շնորհանդեսը եզրափակեց Ա. Բայանդուրը: *Նա պատմեց իր և Վ. Հայրապետյանի երկարամյա շփումների մասին, որին համարում է իր ուսուցիչը: Հավելեց, որ եթե Վարդան Հայրապետյանը մեզ հետ լիներ, «Հայկական հումանիտար պարբերագրերն» անհամեմատ ավելի ամբողջական ու լիարժեք կլինեին:*

Արեգ Բայանդուր – ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտակազմակերպչական բաժնի գիտաշխատող, «Հայկական հումանիտար պարբերագրի» գլխավոր խմբագիր: Գիտական հետաքրքրությունները՝ իրանական առասպելաբանություն և միջին պարսկերեն լեզու: Հեղինակ է 25 հոդվածի: aregbayandur@mail.ru

Աստղիկ Իսրայելյան – պ. գ. թ., Հայաստանի պատմության թանգարանի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայերի ժողովրդական հավատալիքներ, հայկական ժողովրդական կիրառական արվեստ: Հեղինակ է 3 մենագրության, 1 ժողովածուի և 71 հոդվածի: ORCID:0009-0001-2905-7380. Astghikisraelian@gmail.com